ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՓՈԽՎԱՐՉԱՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

N 798 - Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՓՈԽՎԱՐՉԱՊԵՏԻ 2024 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 25-Ի N 677-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ (N 1)

Հիմք ընդունելով «Բարեգործության մասին» օրենքի 13-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետը՝

1. Սահմանել, որ Ամերիկայի հայ ավետարանչական ընկերակցության Հայաստանի մասնաճյուղի կողմից (ՀՎՀՀ՝ 00032803) կնքված՝ ստորև նշված պայմանագրերով նախատեսված գործարքներն անմիջականորեն կապված են Հայաստանի Հանրապետության փոխվարչապետի 2024 թվականի սեպտեմբերի 25-ի «Ամերիկայի հայ ավետարանչական ընկերակցության Հայաստանի մասնաճյուղի կողմից իրականացվող «Բարեկեցիկ ապագա» ծրագրի մասին» N 677-Ա որոշմամբ հաստատված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունեն զգալի նշանակություն՝

1) «Ավանգարդ շին» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 05019792) 2024 թվականի հոկտեմբերի 18-ին կնքված՝ N 291/24 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է Երևանի Բաղրամյան 18 հասցեում առկա մուտքային և վերելակի հանգույցների շինարարական աշխատանքների իրականացում՝ 28,383,334.08 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի.

2) «Հակոբ Պարոնյանի անվան երաժշտական կոմեդիայի պետական թատրոն» ՊՈԱԿ-ի հետ (ՀՎՀՀ՝ 02510974) 2024 թվականի սեպտեմբերի 18-ին կնքված՝ N 242/24 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է թատերահամերգային միջոցառման կազմակերպման ծառայությունների մատուցում՝ 1,560,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի.

3) «Հայկական ծրագրեր» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 00807555) 2024 թվականի հոկտեմբերի 24-ին կնքված՝ N 2024/1024 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է «ՀԾ-Ձեռնարկություն» համակարգչային ծրագրի սպասարկում՝ 4,000,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՓՈԽՎԱՐՉԱՊԵՏ Տ. ԽԱՉԱՏՐՅԱՆ

Երևան

11.11.2024
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ